

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**08 հունիսի 2021թ.
ք. Երևան**

N 129-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ»
ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ՄԻՀՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 31-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 62-Ա որոշումը, որով գրանցել է «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար:

«Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակի 11-րդ համարի թեկնածու է գրանցվել Միհրան Սուրենի Պողոսյանը:

«Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակը գրանցելիս ներկայացված են եղել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ընտրական օրենսգիրք) 84-րդ հոդվածով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Միհրան Սուրենի Պողոսյանի վերաբերյալ ներկայացված է եղել նրա 18.05.2021թ. գրավոր հայտարարությունը՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին, ինչպես նաև լիազոր մարմնի՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի կողմից 25.05.2021թ. տրված թիվ 8-33630 տեղեկանք՝ ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուի՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին, ինչպես նաև հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող և անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

2021 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի N 8-19/8/34020-21 գրությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից 2021 թվականի մայիսի 28-ի «Միհրան Սուրենի Պողոսյանին վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին 25.05.2021թ. թիվ 8-33630 տեղեկանքն անվավեր ճանաչելու մասին» N 84

որոշումը, ըստ որի անվավեր է ճանաչվել Միհրան Սուրենի Պողոսյանին (ծնված 29.05.1976թ.) վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին 25.05.2021թ. թիվ 8-33630 տեղեկանքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանագրել է, որ «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից ներկայացված ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու՝ Միհրան Սուրենի Պողոսյանի (11-րդ հերթական համար) վերաբերյալ փաստաթղթերում բացակայում է «Վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին» տեղեկանքը, և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 84-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերությամբ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 29.06.2021թ. թիվ 34-Ա որոշմամբ «Պատիվ ունեմ» դաշինքին տվել է 48 ժամ թերությունը վերացնելու՝ վերոնշյալ փաստաթուղթը լրացնելու համար:

Նշված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ներկայացվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի կողմից 30.05.2021թ. տրված թիվ 8-34550 տեղեկանք՝ ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուն Միհրան Սուրենի Պողոսյանի վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 31-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 62-Ա որոշումը, որով «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակով պատգամավորի թեկնածու է գրանցվել նաև Միհրան Պողոսյանը՝ հիմք ընդունելով չբավարարող փաստաթղթի համալրումը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2021թ. հունիսի 3-ին ստացվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Մկրտչյանի թիվ 19/8/35420-21 գրությունը, որով մասնավորապես նշվում է.

«2021թ. մայիսի 18-ին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն է դիմել Միհրան Սուրենի Պողոսյանի (ծնված 29.05.1976թ.) լիազորված անձ Նորայր Հարությունյանը՝ Միհրան Պողոսյանին վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանք (այսուհետ՝ տեղեկանք) ստանալու խնդրով: Դիմումին կից ներկայացրել է Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 11.07.2020թ. թիվ 1360-ՕԸ հրամանը՝ Միհրան Պողոսյանին նշված համալսարանում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի առաջին կուրս ընդունելու մասին և ուսման վերաբերյալ 17.02.2021թ. թիվ 213/125 տեղեկանքը:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե լիազոր մարմնին դիմում տալու օրվան նախորդող 1.461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից: Նույն նորմով սահմանվել է Հայաստանի Հանրապետությունից բացակայությունը հարգելի համարելու երկու հիմք, որոնցից է արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառությունը: Ներկայացրած փաստաթղթերով նշված ժամկետի հաշվանցմամբ Միհրան Պողոսյանը դիմում տալու օրվան նախորդող 1.461 օրերից 753 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետը գերազանցվել է 22 օրով և նրան մերժվել է տեղեկանք տրամադրել:

2021թ. մայիսի 20-ին ՀՀ ԱՎ վարչությունում ստացվել է Միհրան Պողոսյանի լիազորված անձի երկրորդ դիմումը՝ տեղեկանք տրամադրելու հարցը կրկին քննարկելու խնդրանքով և ի հավելումն նախորդ փաստաթղթի ներկայացվել է Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 15.01.2020թ. թիվ 0089-ՕԸ հրամանը՝ 2020թ. հունվարի 25-ից մայիսի 31-ը Միհրան Պողոսյանին նշված համալսարանում նախապատրաստական դասընթացների ընդգրկելու մասին, իսկ 2021թ. մայիսի 22-ին՝ Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 21.05.2021թ. թիվ 1427 տեղեկանքն այն մասին, որ նախապատրաստական դասընթացները համարվում են պետական ուսումնառության ծրագիր:

Ներկայացված հրամանների և տեղեկանքների իսկությունը պարզելու նպատակով 2021թ. մայիսի 22-ին հարցում է կատարվել Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարան:

Մինչ հարցման պատասխանը ստանալը, Միհրան Պողոսյանի լիազորված անձը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ տեղեկանքը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով:

2021թ. մայիսի 25-ին դատարանն իր որոշման հիմքում դնելով նաև Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի՝ Միհրան Պողոսյանին նախապատրաստական դասընթացների ընդգրկելու մասին հրամանը, բավարարել է հայցը, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը պարտավորեցրել է տրամադրելու տեղեկանքը: Դատարանի վճիռը եղել է վերջնական՝ առանց բողոքարկման իրավունքի: Ի կատարումն դատարանի վճռի՝ 25.05.2021թ. Միհրան Պողոսյանին տրվել է հայցվող տեղեկանքը:

Այնուհետև, 2021թ. մայիսի 26-ին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում ստացվել է Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի պատասխան գրությունը, որով նշվել է, որ Միհրան Պողոսյանը նախապատրաստական դասընթացների չի ընդգրկվել, ինչպես նաև հերքվել է Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի կողմից 15.01.2020թ. թիվ 0089-ՕԸ հրամանն արձակելու և 21.05.2021թ. թիվ 1427 տեղեկանքը տրամադրելու փաստը: Բացի այդ, հայտնվել է, որ Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի թիվ 1360-ՕԸ հրամանն արձակվել է 11.09.2020թ-ին, մինչդեռ Մ.Պողոսյանի կողմից ներկայացված փաստաթղթում նշված է եղել՝ 11.07.2020թ.:

2021թ. մայիս 26-ի Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի թիվ 11-03-ՕԳ-21/2048 գրությամբ հերքվել է Միհրան Պողոսյանին տեղեկանքի տրամադրման համար էական

նշանակություն ունեցող հիշյալ փաստաթղթերի իսկությունը, որոնց բացակայության պարագայում Միհրան Պողոսյանը չէր կարող համարվել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացի, ուստի 2021թ. մայիսի 28-ին Միհրան Պողոսյանին 2021թ. մայիսի 25-ին տրված թիվ 8-33630 տեղեկանքը, ճանաչվել է անվավեր:

Միհրան Պողոսյանի ներկայացուցիչը 2021թ. մայիսի 27-ին ՀՀ ոստիկանության անձնագրային վարչություն է մուտքագրել երրորդ դիմումը և ներկայացրել Բելգորոդի պետական ազգային հետազոտությունների ինստիտուտից 19.05.2021թ. տրված թիվ 1214 տեղեկանք առ այն, որ Միհրան Պողոսյանը 15.01.2020-31-05.2020թթ. ընկած ժամանակաշրջանում մասնակցել է «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական կրթական ծրագրին, ուղղվածությունը 38.03.03 «Անձնակազմի կառավարում», իսկ 30.05.2021թ.՝ նույն համալսարանի 28.05.2021թ. տրված թիվ 1219 տեղեկանքը, համաձայն որի Միհրան Պողոսյանը ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա ընդունվել է Համալսարանի մագիստրոսի «Մարդկային կապիտալի կառավարում» կրթական ծրագրի ուսուցման առկա բաժնի առաջին կուրս, ուղղվածությունը՝ 38.03.03՝ «Անձնակազմի կառավարում»:

Վերոնշյալ փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով հարցում է կատարվել Բելգորոդի պետական ազգային հետազոտությունների համալսարան: 2021թ մայիսի 30-ի դրությամբ նշված հարցման պատասխանը դեռևս չի ստացվել, ուստի օրենքով սահմանված եռօրյա ժամկետը լրանալու հանգամանքով պայմանավորված Միհրան Պողոսյանին տրվել է նոր տեղեկանք:

2021թ-ին հունիսի 2-ին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում ստացվել է Բելգորոդի պետական ազգային հետազոտությունների համալսարանի 01.06.2021թ. թիվ O-1292 գրությունը, համաձայն որի՝ «Միհրան Սուրենի Պողոսյանը հաշվառված չէ որպես «ԲԵԼՊՀ» ազգային հետազոտական համալսարանի ուսանող, գրությանը կից ներկայացված տեղեկանքը համալսարանի կողմից չի տրամադրվել, «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական ուսումնական ծրագիրը, ուղղվածությունը՝ 38.03.03 «Անձնակազմի կառավարում» «ԲԵԼՊՀ» ԱՀՀ կողմից չի իրականացվում»:

Այսպիսով, «հերքվել է նաև Միհրան Պողոսյանի՝ «ԲԵԼՊՀ» ազգային հետազոտական համալսարանում ուսումնառելու փաստը, և ԱՎՎ կողմից կատարված բոլոր հարցումների արդյունքում հաստատվել միայն Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի թիվ 1360-ՕԴ հրամանի իսկությունը, ընդ որում՝ այն տրվել է 11.09.2020թ-ին, ինչպիսի պայմաններում Միհրան Պողոսյանը ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների ուժով չի կարող համարվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացի, չունի նույն նորմերով ամրագրված՝ ընտրվելու իրավունք, քանի որ չի համապատասխանում վերջին չորս տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու համար օրենքով պահանջվող ցենզին /դիմում տալու օրվան նախորդող 1.461 օրերից 815 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետը գերազանցվել է 88 օրով/»:

Գրությանը կից ներկայացվել է նաև Միհրան Պողոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերի, ԱՎ վարչության կողմից կայացված հարցումների և դրանց պատասխանների պատճենները՝ թարգմանությունների հետ միասին:

Ներկայացված փաստական հանգամանքների ուսումնասիրմամբ փաստվում է, որ Միհրան Սուրենի Պողոսյանի կողմից վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանք ստանալու համար ներկայացվել է երկու դիմում: Առաջին դիմումի հետ կապված առկա են՝

- Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 11.07.2020թ. թիվ 1360-ՕԺ հրամանը՝ Միհրան Պողոսյանին նշված համալսարանում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի առաջին կուրս ընդունելու մասին և ուսման վերաբերյալ 17.02.2021թ. թիվ 213/125 տեղեկանքը: Հրամանը ստորագրված է ուսումնական գծով պրոռեկտոր Գ. Խ. Շարիպյանովայի կողմից:

- Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 15.01.2020թ. թիվ 0089-ՕԺ հրամանը՝ 2020թ. հունվարի 25-ից մայիսի 31-ը Միհրան Պողոսյանին նշված համալսարանում նախապատրաստական դասընթացների ընդգրկելու մասին: Հրամանը ստորագրված է ուսումնական գծով պրոռեկտոր Գ. Խ. Շարիպյանովայի կողմից:

- Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 21.05.2021թ. թիվ 1427 տեղեկանքն այն մասին, որ 15.01.2020թ. մինչև 31.05.2021թ. ընկած ժամանակահատվածում տեղ գտած նախապատրաստական դասընթացը Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարան ուսումնական պետական ծրագրի մասն է հանդիսանում: Տեղեկանքը ստորագրված է ուսանողների հետ աշխատանքի գծով «Պավել Կորչագինի վրա» կենտրոնի բաժանմունքի վարիչ Ե.Վ. Աֆանասևայի կողմից:

- Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանից ստացված փաստաթղթերի իսկությունը պարզելու նպատակով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 22.05.2021թ. թիվ 8-32666 գրությունն՝ ուղղված Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորին:

- Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 26.05.2021թ., թիվ 11-03-ՕԴ 212048 պատասխան գրությունը, որով նշվել է, որ Միհրան Պողոսյանը հանդիսանում է համալսարանի առաջին կուրսի ուսանող: Ընդունվել է 27.04.02 «Որակի կառավարում» ուղղվածությամբ, հրաման թիվ 1360-ՕԺ առ 11.09.2020թ.: Միաժամանակ հայտնվում է, որ Միհրան Պողոսյանը օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսված նախապատրաստական բաժնում հաշվառված չի եղել և թիվ 0089-ՕԺ հրամանը առ 15.01.2020թ. և թիվ 1427 տեղեկանքը առ 21.05.2021թ. համալսարանի կողմից չեն տրամադրվել: Փաստաթուղթը ստորագրված է ուսանողների հետ աշխատանքների կենտրոնի պետ Յու.Ե. Գորինայի կողմից:

Երկրորդ դիմումի հետ կապված առկա են՝

- «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան»-ից 19.05.2021թ. տրված թիվ 1214 տեղեկանքն առ այն, որ Միհրան Պողոսյանը, համաձայն 14.01.2020թ. թիվ 114-Շ հրամանի, 15.01.2020-31-05.2020թթ. ընկած ժամանակաշրջանում մասնակցել է «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական կրթական ծրագրին,

ուղղվածությունը 38.03.03 «Անձնակազմի կառավարում»: Տեղեկանքը ստորագրված է շրջանավարտների հետ աշխատանքի բաժնի տեսուչ Մ.Ս. Սորոկինայի կողմից.

- ստացված փաստաթղթի իսկությունը պարզելու նպատակով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 27.05.2021թ. թիվ 8-34517 գրությունն՝ ուղղված «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի» ռեկտորին.

- «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան»-ից 28.05.2021թ. թիվ 1219 համարով տրված 11.08.2019թ. թիվ 1226-ՈՒ հրամանից քաղվածք, ըստ որի՝ Միհրան Պողոսյանը ընդունվել է համալսարանի մագիստրոսի «Մարդկային կապիտալի կառավարում» կրթական ծրագրի ուսուցման առկա բաժնի 1-ին կուրս, ուղղվածությունը՝ 38.03.03 անձնակազմի կառավարում: Փաստաթուղթը ստորագրված ստորագրված է շրջանավարտների հետ աշխատանքի բաժնի տեսուչ Մ.Ս. Սորոկինայի կողմից.

- ստացված փաստաթղթի իսկությունը պարզելու նպատակով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 31.05.2021թ. թիվ 8-34777 գրությունն ուղղված «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան»-ի ռեկտորին.

- «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան»-ի պրոռեկտոր Վ.Ա. Կուլչմիստի 01.06.2021թ. թիվ 0-1292 գրությունը, որով նշվում է, որ Միհրան Պողոսյանը Միհրան Սուրենի Պողոսյանը հաշվառված չէ որպես «ԲԵԼՊՀ» ազգային հետազոտական համալսարանի ուսանող, գրությանը կից ներկայացված տեղեկանքը համալսարանի կողմից չի տրամադրվել, «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական ուսումնական ծրագիրը, ուղղվածությունը՝ 38.03.03 «Անձնակազմի կառավարում», «ԲԵԼՊՀ» ԱՀՀ կողմից չի իրականացվում:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրմամբ հանձնաժողովը փաստելով, որ առկա են հակասական բովանդակությամբ փաստաթղթեր, գտնում է, որ հավաստի համարվում են՝

ա) Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 26.05.2021թ., թիվ 11-03-ՕԳ 212048 գրությունը, որով նշվել է, որ Միհրան Պողոսյանը հանդիսանում է համալսարանի առաջին կուրսի ուսանող: Ընդունվել է 27.04.02 «Որակի կառավարում» ուղղվածությամբ, հրաման թիվ 1360-ՕԴ առ 11.09.2020թ.: Միաժամանակ հայտնվել է, որ Միհրան Պողոսյանը օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսված նախապատրաստական բաժնում հաշվառված չի եղել և 15.01.2020թ. թիվ 0089-ՕԴ հրամանը և 21.05.2021թ. թիվ 1427 տեղեկանքը համալսարանի կողմից չեն տրամադրվել,

բ) «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան»-ի պրոռեկտոր Վ.Ա. Կուլչմիստի 01.06.2021թ. թիվ 0-1292 գրությունը, որով նշվում է, որ Միհրան Պողոսյանը հաշվառված չէ որպես «ԲԵԼՊՀ» ազգային հետազոտական համալսարանի ուսանող, գրությանը կից ներկայացված տեղեկանքը համալսարանի կողմից չի տրամադրվել, «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական ուսումնական ծրագիրը, ուղղվածությունը՝ 38.03.03 «Անձնակազմի կառավարում», «ԲԵԼՊՀ» ԱՀՀ կողմից չի իրականացվում:

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները.

Ըստ Պողոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերի ստացվում է, որ նա 15.01.2020թ-ից-31.05.2020թ. ընդունվել է Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի նախապատրաստական դասընթացին՝ «Մարդկային կապիտալի կառավարում» ուղղվածությամբ, միաժամանակ ըստ «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի»-ից 19.05.2021թ. տրված թիվ 1214 տեղեկանքի նույն ժամանակահատվածում՝ 15.01.2020-31-05.2020թթ. նա մասնակցել է «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական կրթական ծրագրին:

Ավելին, ըստ ներկայացված փաստաթղթերի Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի թիվ 1427 տեղեկանքը տրվել է 21.05.2021թ., իսկ «Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի»-ից թիվ 1214 տեղեկանքը՝ 19.05.2021թ.: Այսինքն՝ ստացվում է, որ Պողոսյանի կողմից երկու տեղեկանքներն էլ ստացվել էին, սակայն դրանք տարբեր ժամանակներում ներկայացվեցին լիազոր մարմնին և ուշագրավ է, որ երկրորդը ներկայացվում է այն ժամանակ, երբ առաջին տեղեկանքին առնչվող հարցերով տեղի էր ունենում դատական քննություն վարչական դատարանում: Ի դեպ, ուշագրավ է, որ իրազեկ լինելով Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 26.05.2021թ. թիվ 11-03-ՕԳ 212048 պատասխան գրությանը (նշված փաստաթղթին հնարավոր էր լիարժեք ծանոթանալ լիազոր մարմնի վարչական վարույթի շրջանակներում և այդ վարույթի շրջանակներում կայացված ակտի դատական վիճարկման շրջանակներում), Պողոսյանի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի 26.05.2021թ. թիվ 11-03-ՕԳ 212048 պատասխան գրությունը կամ դրա բովանդակությունը կասկածի տակ դնելու մասին:

Ինչ վերաբերում է Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի պրոռեկտոր Վ.Ա. Կուլչմիստի 01.06.2021թ. թիվ 0-1292 գրությանը, որով նշվում է, որ Միհրան Սուրենի Պողոսյանը հաշվառված չէ որպես «ԲԵԼՊՀ» ազգային հետազոտական համալսարանի ուսանող, գրությանը կից ներկայացված տեղեկանքը համալսարանի կողմից չի տրամադրվել, «Մարդկային կապիտալի կառավարում» նախապատրաստական ուսումնական ծրագիրը, ուղղվածությունը՝ 38.03.03 «Անձնակազմի կառավարում», «ԲԵԼՊՀ» ԱՀՀ կողմից չի իրականացվում, ապա նշված փաստաթղթի կասկածի տակ դնելու վերաբերյալ ևս որևէ ապացույց ներկայացված չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Պատիվ ունեմ» դաշինքի (որի ընտրական ցուցակում ընդգրկված է Միհրան Պողոսյանը) լիազոր ներկայացուցչին իրազեկել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստի մասին, նրանց միջոցով փոխանցել է իրազեկում ցուցակում ընդգրկված թեկնածուին և առաջարկել ծանոթանալ փաստաթղթերին ու առկայության դեպքում ներկայացնել ապացույցներ:

Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե թեկնածուի գրանցման համար մշտապես բնակվելու մասին տեղեկանքը ստանալու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմում տալու օրվան նախորդող 1 461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:

Նույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր է ճանաչվում, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

1) նա չունի ընտրվելու իրավունք»:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Մկրտչյանի թիվ 19/8/35420-21 գրությամբ փաստվում է, որ «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Միհրան Պողոսյանը չի հանդիսանում վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, հետևապես չունի ընտրվելու իրավունք: Նման եզրահանգման է հանգում նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն վարույթի շրջանակներում առկա փաստաթղթերի և ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5623/05/21 վարչական գործով՝ ըստ հայցի Միհրան Պողոսյանի ընդդեմ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության 25.05.2021թ. վճռի ուսումնասիրմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. «Պատիվ ունեմ» դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Միհրան Սուրենի Պողոսյանի (11-րդ համար) գրանցումը ճանաչել անվավեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ**

Տ. Մ ու կ ու չ յ ա ն